Լավություն արա՛, ջուրը գցիր՝ մի օր առջևդ կգա...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS հուլիս- օգոստոս , 2018, N 3 (40) БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔՆԵՐ

(հիմնադրամի 25-ամյակի և «Բարեգործ» պաշտոնաթերթի 40-րդ համարի առթիվ)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ք. Ստեփանակերտ, 9 օգոստոսի, № 1-06/457

Շնորհավորական ուղերձ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» 25-ամյակի կապակցությամբ

Հարգելի՛ բարեկամներ,

Արցախի Հանրապետության իշխանությունների և անձամբ իմ անունից ի սրտե շնորհավորում եմ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» 25-ամյակի կապակցությամբ:

Սա նշանակալի իրադարձություն է մեր երկրի կյանքում: Ստեղծվելով հայ ժողովրդի համար ծանր ժամանակահատվածում՝ հիմնադրամն իրականացրել է հայրենանվեր առաքելություն, որն արժանի է ամենաբարձր գնահատականի: Այս բոլոր տարիների ընթացքում նա կանգնած է եղել արցախցու կողքին՝ օգնելու հաղթահարել բազում դժվարություններ, դիմակայել անհամար փորձություններին, տեր կանգնել հայրենի հողին և օջախին, շենացնել ու զորացնել այն:

Այս ազգանվեր գործունեության ընթացքում Արցախում կյանքի են կոչվել բազմաթիվ ծրագրեր սոցիալական, կրթական, մշակութային և այլ ոլորտներում: Արցախը մայր Հայաստանին կապող Քաշաթաղի շրջանում հիմնադրամի աջակցությամբ վերականգնվում ու նորոգվում են դպրոցներ ու մանկապարտեզներ, Արցախի և Հայաստանի բուհերում ուսում են ստանում հարյուրավոր կարիքավոր ընտանիքների երեխաներ, իրականացվում են տարբեր միջոցառումներ՝ ուղղված մեր լեզվի ու մշակույթի պնատմության ու ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը: Հետևողական աշխատանք է տարվում քաղաքացիների սոցիալական խնդիրների լուծման, հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավման ուղղությամբ:

Այս բոլոր աշխատանքներն արհեստավարժ կերպով լուսաբանվում են հիմնադրամի պաշտոնաթերթ «Բարեգործի» էջերում, որի հոբելյանական 40-րդ համարն է արդեն լույս տեսնում:

Թանկագի՛ն բարեկամներ,

Մեկ անգամ ևս շնորհավորում եմ հիմնադրամի բոլոր անդամներին այս հիշարժան տարեդարձի կապակցությամբ և մաղթում հետագա հաջողություններ ու ամենայն բարիք:

Վստահ եմ, որ հիմնադրամն այսուհետև ևս նույն ջանասիրությամբ ու արդյունավետորեն կիրականացնի իր գործունեությունը՝ արժանի ավանդ ունենալով մեր հայրենիքի ու ժողովրդի զորացման ու բարգավաճման գործում:

Ստորագրություն՝ ԲԱԿՈ ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒՇԻԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄ

24 հուլիսի 2018 № 2/151

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն

պրն Գուրգեն Մելիքյանին

Հարգելի Գուրգեն Վրեժի,

Շուշիի շրջանի վարչակազմը խորին երախտագիտություն է հայտնում Ձեզ՝ շրջանի բնակչությանը և հատկապես կազմակերպություններին պարբերաբար ցուցաբերվող օգնության համար:

Առանձնապես զգալի է Ձեր կողմից վերջերս գյուղական բնակավայրերին 1208 զույգ կոշիկ անհատույց տրամադրելը:

Հուսով եմ՝ մեր համագործակցությունը կլինի շարունակական՝ ինչի արդյունքում համատեղ ջանքերով կլուծենք բնակչության սոցիալական վիճակի բարելավմանն ուղղված տարաբնույթ հարցեր:

Հարգանքով՝

ղեկավար (ստորագրություն) Վ. ԿԱՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄ

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ի Ր

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» (գործադիր տնօրեն՝ Գ. Մելիքյան) շրջանում իրականացնում է բազմաբնույթ սոցիալական, կրթական, քաղաքաշինական, բնապահպանական ու այլ մարդասիրական ծրագրեր, որի համար և ի նշանավորումն հիմնադրամի 25-րդ տարեդարձի շնորհավորում ենք և հայտնում մեր խորին շնորհակալությունը:

Հիմնադրամն ստեղծման օրվանից իր նշանակալի դերակատարումն է ունեցել շրջանի վերաբնակեցման ու զարգացման գործում:

Հիմնադրամը Քաշաթաղի շրջանի՝ տարիների փորձություն անցած լավագույն բարեկամներից է:

30 հուլիսի 2018 ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ (ստորագրություն, կնիք) Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՁԵՐ ԵՐԹԻՆ ՎԱԽՃԱՆ ՉԿԱ

Արցախյան ազատամարտն իր հետ բերեց ոչ միայն համազգային ուժերի նպատակասլաց համախմբում ու ոգեղեն վերածնունդ, այլև մեր կյանքի մշակութային, գրական ու պատմական, ազգագրական ու ժողովրդագրական ասպարեզների վերընձյուղում: Կյանքի կոչվեց նաև բարեգործության գաղափարը, որը գնալով լայն թափ ստացավ: Ստեղծվեցին մեծ ու փոքր բազում մարդասիրական ու բարեգործական կազմակերպություններ, միություններ ու ընկերություններ, որոնցից մեկն էլ արդեն քսանհինգ տարի գործող «Քաշաթաղի՝ Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամն» է, որի միջոցները գոյանում են հիմնականում արտասահմանի մեր հայրենակիցների նվիրատվություններից և հենց Գուրգեն Մելիքյանի՝ գործադիր տնօրենի անձի նկատմամբ ունեցած մեծ վստահության շնորհիվ:

Արդյունավետ է հիմնադրամի բազմաճյուղ գործունեությունը՝ սկսած սննդից ու հագուստից, ուսումնական, կրթական, հրատարակչական, հայրենագիտական և այլ ոլորտներից և վերջացրած հազարավոր պտղատու և դեկորատիվ ծառերի (հիմնականում ընկուզենի, սոսենի, թթենի) տարիներ շարունակ անընդմեջ իրականացվող ծառատունկերով, Բերձոր շրջկենտրոնի և Քաշաթաղի հեռավոր գյուղերի բազմազավակ ընտանիքներին տարաբնույթ օգնություններով ու մանավանդ վերջերս մեծ ծավալ ստացած խոշոր եղջերավոր անասունների՝ կաթնատու կովերի անհատույց հատկացումներով:

Բարեգործական այս կազմակերպությունն իրագործում է անփոխարինելի մի առաքելություն ևս. Հարյուրավոր արտասահմանցիների, ուսանողների, երիտասարդների ու դպրոցականների օգնում է ոտք դնելու մեր հայրենիքի չքնաղ այն եզերքը, որն այսօր ողջ հայության ազատության պայքարի և հաղթանակի խորհրդանիշն է, Հայաստան երկրի գոյության երաշխիքներից մեկը:

Այս ամենի համար էլ ի սրտե ողջունում եմ «Քաշաթաղի՝ Գուրգեն Մելիքյանի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» քսանհինգամյակը և այդ միության օրգանի՝ «Բարեգործ» թերթի քառասուներորդ հոբելյանական համարի լույսընծայումը՝ մաղթելով, որ նրանց ազգանվեր ճանապարհն անվախճան լինի, ճանապարհ, որ բարության է տանում, մարդասիրության ու հայրենասիրության:

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԱԳՅԱՆ

01. 08. 2018

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՀՀ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ ՀՈՒՇԵՐԻՑ

Գուրգեն Մելիքյանը և երջանկահիշատակ բարերար, մեր հիմնադրամի լավ բարեկամ Սերժ Փափայանցը *2000* թ. գարնանը Քաշաթաղի Բերձոր շրջկենտրոնի մատույցներում՝ ամայի վայրում, հիմնեցին զորավար Մոնթե Մելքոնյանի անվան պուրակը

Գուրգեն Մելիքյանը, քույրը՝ Մայլեն, և եղբայրը՝ Մարգարը Նկարում՝ *2018* թ. հունիսին Մոնթե Մելքոնյանի ծառաշատ պուրակ և հերոսի հիշատակը հավերժացնող հուշաքարին այցի եկած նրա հարազատները՝ ձախից աջ՝ քույրը՝ Մարսիան, կինը՝ Սեդան

Ա.

Արցախի անկախության համար մղվող պատերազմը դեռ շարունակվում էր, երբ ես ու ամուսինս՝ Ջորջ Նաջարյանը, հանդիպեցինք լեգենդար ազատամարտիկ Մոնթեին:

1993 թ. մայիսն էր: Մոնթեի քաջությունն ու խելացի ռազմական մարտավարությունը մեծապես օգնեցին հաղթել ազերի բռնակալների դեմ հայերի պայքարում:

Առաջին անգամ նրան հանդիպեցինք Գանձասարում, Արցախի բարձր լեռներում ծվարած 10-րդ դարի մենաստանում: Լեռան եզրին կանգնած՝ նայում հովտին ու Լեդի Քոքսի հետ միասին զրուցում էինք Մոնթեի հետ: Քոքսն ու ես փորձում էինք նրան խորհուրդ տալ, թե ինչ խոսի հարցազրույցի ժամանակ: Փորձում էինք համոզել նրան, որ ավելի պակաս ռազմաշունչ ու ավելի դիվանագիտական լինի իր պատասխաններում:

Ուզում էինք, որ մամուլը հավանի նրան, համակրի ու սատարի անկախության նրա պահանջին՝ հուսալով, որ պատերազմը շուտով վերջանալու է: Բայց Մոնթեն Մոնթե էր մնում՝ անդրդվելի իր դիրքորշման մեջ. նա չէր զիջելու: Նա մամուլին հայտնելու էր, որ ինքը պահանջում էր ամբողջ Արցախը, և ոչ մի թիզ պակաս: Ասելու էր, որ արցախահայերը հաղթելու են, որովհետև Արցախը պատմականորեն հայկական հող է՝ իր բացառապես հայ բնակչությամբ, պատմամշակութային հնագույն ու նոր հայկերտ հուշարձաններով ու բնակավայրերով՝ այսօր առավել ևս:

Մոնթեն չէր պատրաստվում փոխել իր խոսքը մի քանի լրագրողի հաճոյանալու համար: Նա հստակ գիտեր՝ ինքն ի՛նչ է անում և ինչո՛ւ: Այդ մենք պետք է ընդունենք որևէ խնդրի հանդեպ նրա դիրքորոշումը և այդպես էլ արինք:

Բացի այդ, նա ճշմարտության և պատվաբեր վարքի չափանիշներ էր սահմանել իր մարդկանց համար: Ըստ այդ չգրված կանոնակարգի՝ նախ՝ չէր թույլատրվում ծաղրել կամ նվաստացնել տղամարդկանց: և ապա՝ Մոնթեն բոլոր զինակիցներից ազնվություն ու նվիրվածություն էր պահանջում Արցախի սուրբ գործին:

Նրա հետ ճամփա ընկանք ոչ հեռու գտնվող Գիշի գյուղ ու գյուղացիների, հատկապես երեխաների կողմից նրա անհավատալի ընդունելության ականատեսը եղանք: Բազում երեխաներ դուրս թափվեցին ինչ-որ տեղերից, որպեսզի նրա ետևից գնան, դիպչեն նրան, նրա հետ լինեն: Բախտավոր էր այն աղջնակը, ում երգ ու լեգենդ դարձած Մոնթեն իր ուսերին նստեցրած քայլում էր գյուղի միջով: Երեխաները երգում էին իր մասին մի շատ հայտնի երգ:

Կարծում եմ՝ հաջորդ օրն էր, երբ նրան հանդիպեցինք Ստեփանակերտի Ազատամարտիկների պուրակում: Ջորջը փորձում էր նրան համոզել սաղավարտ կրել մարտի դաշտում: Վեճն ապարդյուն էր, չնայած ասաց, որ իր զինակիցները կարող են կրել դրանք, եթե ցանկանում են: (Նույնիսկ վստահ չէի՝ սաղավարտ ունեի՞ն նրանք, թե՞ ոչ):

Մեր միջոցներով զրահաբաճկոններ էինք ձեռք բերել, և Մոնթեի զինակիցները դրանք էին գործածում:

Երեք շաբաթ անց Մոնթեն զոհվեց: Մենք ցնցված էինք բոլոր նրանց նման, ովքեր գիտեին նրա ասպետական ու համարձակ պայքարի պատմությունը:

Դժվար է հավատալ, որ 25 տարի է անցել մեր այս եզակի հանդիպումից, 25 տարի նրա մահվանից: Թվում է՝ երեկ էր: Նրա նվիրվածությունն իր ժողովրդին ու հանուն նրանց իր մեծ զոհաբերությունը կապրի հավերժ:

ՔԱՐՈԼԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ

Ամերիկահայ բժիշկ

Բ

Մոնթե Մելքոնյանը (Ավո) Արցախյան ազատամարտի պատմությունը և մեր հաղթանակը կերտած բացառիկ հերոսներից էր: Արտակարգ ընդունակություններով օժտված այդ ամերիկացին հայրենիքի որոնման տեսլականով շրջել էր աշխարհի ավելի քան 40 երկրներում և իր հայ լինելու գիտակցությամբ եղել Թուրքիայում՝ իր պապի տանը, ու զարմացել, թե ինչու են նրա դռները փակ իր առաջ և իր նման՝ աշխարհացիր բոլոր հայերի երբեմնի տների դռները՝ նույնպես: Այդ փակ դռները բացելը նա համարել էր իր կյանքի նպատակը և հասկացել, որ այն իրագործելու համար նախ հարկավոր է լինել հայրենիքի զինվոր: Տարիներով նախապատրաստվել էր նա այդ սրբազան նպատակի իրագործմանը, և երբ հնչեց Արցախի ազատության կանչը, նա հայտնվեց ճիշտ տեղում՝ Արցախի Մարտունու շրջանի պաշտպանության դիրքերում՝ հայ զինվորի և հրամանատարի իր պարտքը կատարելու:

Ռազմական ժամանակների խստակեցությամբ, օրինակելի կարգապահությամբ ու նպատակասլացությամբ, հայ զինվորի հանդեպ սիրով ու պահանջկոտությամբ, գերի թշնամու հանդեպ մարդավարությամբ նա դարձավ լեգենդար հրամանատար, որ անուրանալի դերակատարություն ունեցավ մեր բանակաշինության ու ռազմավարական արվեստի մեջ:

Այս տեսակ իրական հերոսների մասին էր Եր. Օտյանն ասում. «Հույս մը իրեններուն և սարսափ՝ թշնամիներուն համար: Չըլլալիք բաներ կպատմվին իր մասին, որ ոչինչ են իր ըրածներուն քով... Ու եղած են այդպիսի հերոսներ վերջին տարիներու մեր թախծագին պատմության մեջ»:

Նրան տեսնելը անհույս չէր, մանավանդ որ տիկինը՝ Սեդա Գպրանյանը, համալսարանական մեր ուսանողուհին էր, ուրեմն՝ հանդիպումը անհավանական չէր:

... Միակ հանդիպումը տեղի ունեցավ պատահաբար, 1993 թ. հունիսի 8-ին:

Երուսաղեմից արձակուրդ էի եկել: Սիրելի ուսուցիչս՝ ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ Հր. Թամրազյանը, շտապ կանչեց.

- Բարո՛վ ես եկել: Ա՛յ տղա, մի շատ պատկառելի մարդ պիտի գա, որ ինձ հանդիպի: Հիմա Երևանում է, երևի կարևոր գործով է եկել: Հակառակի պես նույն ժամին ռեկտորն է ինձ կանչել անհետաձգելի խնդրով: Շատ անհարմար բան կստացվի, եթե այդ հյուրը գա ու իմ դուռը փակ տեսնի: Ուրիշ հարմար մեկին չգտա, քեզ կանչեցի: Այստե՛ղ եղիր, պատշաճորեն ընդունի՛ր, իմ անունից ներողություն խնդրիր, զբաղեցրու մինչև իմ վերադարձը: Ես շատ չեմ ուշանա: Մի՛ վախեցիր, մենակ չես մնալու. Գուրգեն Մելիքյանը ուր որ է քեզ կմիանա:

- Բայց ո՞վ է այդ խորհրդավոր հյուրը, չիմանա՞նք:

- Ռեկտորին սպասեցնել չի կարելի,- անառարկելի ասաց նա,- ժամանակ չունեմ: Հենց տեսնես՝ կճանաչես:

Հր. Թամրազյանի գնալուց մի քանի րոպե հետո դուռը թակեցին: Ներս մտավ այդ օրը կապույտ ջինս հագած, երկարուկ դեմքով կիսաճաղատ, զինվորականի կեցվածքով հաղթանդամ մեկը՝ իրոք ծանոթ, բայց որտեղի՞ց: Հիշեցի: Տեսել էի Գուրգեն Մելիքյանի մոտ եղած լուսանկարներում: Այո՛, չէի սխալվում, Մոնթե Մելքոնյանն էր: Իր թավ, մի քիչ էլ բեկբեկուն ձայնով, բայց խրոխտ ու

- Ո՞ւր է Հրանտ Թամրազյան,- հրամայաբար հարցրեց.

Բացատրելուս պահին իսկապես եկավ Գ.Մելիքյանը, ողջագուրվեցին, հարցուփորձեցին՝ ինչպե՞ս է, որ պատերազմական այս օրերին երկոսով էլ Երևանում են: Մեկը ՀՀ պաշտպանության նախարարություն էր եկել մեզ անհայտ հույժ կարևոր առաքելությամբ, մյուսը, որ ԼՂ պաշտպանության նախարարի տեղակալ էր արտաքին կապերի գծով (մենք դա չգիտեինք), արևելագիտության ֆակուլտետի դեկանի հանգամանքով էր ուստարվա վերջում կարճ ժամանակով հայտնվել համալսարանում: Վերադարձավ Հր. Թամրազյանը, հարգալից ողջունեց, և սկսվեց անմոռաց մի զրույց:



Մոնթեն նախ գիտնական էր, ապա՝ զինվորական

Հարցապնդողը Թամրազյանն էր

- Սիրելի՛ Մոնթե, Սեդան ասպիրանտուրայի հարցով էր եկել, ես, քո սխրանքների մասին ուրիշներից լսած լինելով, նրան խնդրեցի, որ երբ Երևան գալու լինես, հանդիպես ինձ: Լրջագույն պատերազմ է: Չգիտեմ՝ ռազմաճակատում ի՛նչ է կատարվում. Ուզում եմ քեզնից՝ անմիջական աղբյուրից իմանալ: Շնորհակալ եմ, որ ժամանակ գտար ինձ տրամադրելու: Բա ինչպե՞ս ես եկել, հիմա ո՞վ է այնտեղ քեզ փոխարինում:

- Մեր արդար գործի մեջ ինձ փոխարինողներ կան, թող սովորեն առանց ինձ էլ կռվել: Նախարարի հետ առանձնազրույց ունեի, եկա ու մեկնում եմ: Ուսուցչապետին, գիտության մարդուն մերժել չէի կարող: Սեդան շա՛տ է պատմած Ձեր մասին, ես ալ ձեզի տեսնելու փափագ ունեի: Այստեղեն ուղիղ ռազմաճակատ պիտ մեկնիմ: Իմ տեղս հոն է, ինչպես մեր նախնիներն են ասել՝ «թաղեցեալ լինիմք եւ ո՛չ խոնարհիմք»:

- Մոնթե՛, թուրքերի մտադրությունը բոլոչին հայտնի է, նրանք ուզում են Ղարաբաղի բռնազավթում և

հայաթափում: Այս պահին ի՞նչ են անում նրանք, և դու ի՛նչ հակաքայլ ես մտադիր անել:

-Պարզ ըսեմ ձեզի: Թուրքերի նպատակը ճիշտ նկատեր եք: Այսօր թուրքը իր մատները տարբեր տեղերից մխրճեր է Ղարաբաղի մարմնի մեջ և կուզե ուտել անոր: Իմ նպատակը այդ մատները կտրատելն է, որ Ղարաբաղը կարենանք փրկել: Ատի նաև Հայաստանի փրկությունն է:

Պատերազմ է հիմա, դաժան, զոհեր պահանջող անողոք պատերազմ: Մենք մեր բոլոր ուժեր պիտ ներդնենք, կազմակերպված կռվինք այս պատերազմում հաղթելու և խաղաղություն հաստատելու համար: Շատ հողեր, թանկեր, զենքեր գրավեր ենք, սակայն թշնամու ձեռք դեռ շատ հայկական հողեր կան. Անոնք ալ պիտ գրավենք: Կրցած եմ հաղթելու հավատ ներշնչել մեր զինվորներուն: Կարող ենք հաղթել, եթե ապուշություններ չընենք: Միայն մեր հաղթանակով կհաստատվի խաղաղությունը:

Մեր օրերում այսպես է տարածվում Մոնթեի լեգենդը

- Մոնթե՛, գիտենք, որ թուրքերը թեև վախկոտ են, բայց շա՛տ են հոխորտում, թե Ղարաբաղն էլ են գրավելու, Զանգեզուրն էլ... Նրանց մեջ էնպես լավ կռվող, քաջ տղերք կա՞ն, թե՞ միայն հոխորտում են:

- Կա՛ն, ի՛նչպես չկան, անանկ լավ կռվող թուրք տղաք կան, որ ափսո՛սդ կուգա զարնես շանսատակ ընես:

Հերոսավայել, ապշեցուցիչ պատասխան էր սա, որ մի պահ լռության մատնեց բոլորիս: Հետո Գուրգեն Մելիքյանը հանդգնեց հարցնել.

- Մոնթե՛, ում ասում եմ՝ չեն հավատում, ասում են՝ հորինել եք: Խնդրում եմ ինքդ պատմիր պրոֆեսորին, թե ինչպես յոթ մարտիկներով կասեցրիր թուրքերի հսկայական բանակի հարձակումը Ստեփանակերտի վրա:

- Մեր հետախուզություն լավ չէր աշխատած, ատանկ հարձակումի մը չէինք սպասեր: Պատահաբար էինք մտած մտած այդ տարածք, և հոն բախտս բերեց՝ գիշեր էր. թշնամին չէր գիտեր մեր քանակի մասին: Ճիշտ հաշվարկ ըրի և զինվորներու ճիշտ տեղաբաշխում, որոնք ալ էինք կրակեցին միայն իմ հրամանովս: Կարծելով շա՛տ շատ ենք՝ հարձակվող թշնամին խուճապի մատնվեցավ և վախնալով շրջապատման մեջ ընկնել՝ նահանջեց: Ատ ոչինչ, Գո՛ւրգեն, բերածդ ռացիաներ շա՛տ կօգնեն մեզի թե՛ նախապատրաստություններու, թե՛ մարտական գործողություններու ատեն, անոնց շնորհիվ է, որ մեր զորախումբերու միջև կապ կըլլա, մեր առավելությունն է ատիկա, բայց դուն գիտե՞ս, որ մենք հեռադիտակներու պակասություն ունինք, սովորական հեռադիտակներու:

Մոնթեի հիշատակի օրը «Եռաբլուր» պանթեոնում

- Շատ լավ: Հեռադիտակներ ուզածիդ չափ կլինեն: Վաղը մեկնելիս հետդ կտանես կամ ես ինքս կբերեմ կհասցնեմ:

Մեր կարճատև հանդիպումն ավարտվեց: Հաջողության մաղթանքով հրաժեշտ տվինք իրար: Վերջի՛ն հրաժեշտը: Ուրիշ բան ո՞վ կմտածեր:

Քառորդ դար է անցել մեր հանդիպման այդ օրից:

Մոնթեն զոհվեց հերթական մարտական գործողության հաղթական ավարտից հետո՝ հունիսի 12-ին՝ մեր միակ հանդիպումից ընդամենը 4 օր հետո: Պատերազմող ժողովուրդը սգաց հերոսի մահը, զգաց նրա անփոխարինելի լինելը: Մարտական ընկերները երդվեցին կռվել նաև նրա փոխարեն ու նրա ոգով: Բայց հաղթանակի բերկրանքը չապրեց Հայաստանի և Արցախի Ազգային հերոսը, նա մահին հաղթեց իր սխրանքներով ու անմահացավ սերունդների հիշողության մեջ, դարձավ երգ ու լեգենդ, նրա անունով դպրոցներ ու փողոցներ կոչվեցին, անվանակոչվում են շատ նորածիններ: Նա մարմնավորվեց գրական շատ երկերում, հուշագրություններում ու կինոֆիլմերում, դարձավ հայրենիքի նվիրյալ հերոսի կատարելատիպ: Նա հասունացել էր այդպես հավերժանալու համար:

Հմուտ զորավարը, աննկուն, խանդավառ մարտիկն ու հրամանատարը սերունդներին թողել է մի կարգախոս - պատգամ, որը փորագրված է Բերձորի «Մոնթե Մելքոնյան» պուրակի բազալտե հուշաքարին. «Եթե կորցնենք Արցախը, կշրջենք հայոց պատմության վերջին էջը»: Այդ պատմությունը, հայո՛ց պատմությունը, բարեբախտաբար, նոր սերունդները համալրում են հերոսական նոր էջերով, որոնց մեջ, սակայն, վերջին էջ չկա և չի լինելու:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ



Ֆլորա Սարյանի՝ խորհրդանշական խորագիր կրող, 367 էջանոց այս վեպը լույս է տեսել Լոս Անջելեսում և, ցավոք, չունի մատենագիտական այլ տվյալներ՝ խմբագրի՝ ճանաչված արձակագիր Խորեն Արամունու, սրբագրիչի և տպարանի անուններից բացի: Սակայն ունի խմբագրի՝ մեկ էջանոց համառոտ ու խիտ, բնութագրական առաջաբանը, որը փաստորեն առաջին գնահատողական խոսքն է հույժ արդիական բովանդակությամբ այս վեպի մասին, որից, ցավոք, միայն հատուկենտ օրինակներ են հասել Հայաստան:

Հեղինակը՝ ազնիվ ու համեստափայլ Ֆլորա Սարյանը, իր գրական ձիրքերը, գեղարվեստական հակումները թեև երբևէ չի թաքցրել, սակայն գրական հարցերում առանձնապես ակտիվ չի եղել. մենք նրան առավելապես ճանաչում ենք իր եռանդուն հայրենանվեր գործունեությամբ, հատկապես մեր հիմնադրամի միջոցառումներում իր շիտակ ու հայաստանամետ, շնորհակալության արժանի կեցվածքով:

Բայց մեր խնդիրն այս պահին նրա վեպի՛ արժևորումն է, որը, որպես գրական փաստ, վերջերս է հայտնվել ընթերցողի սեղանին: Սակայն պետք է խոստովանենք, որ մեր թերթում տեղի սղության պատճառով հնարավոր չէ կատարել գրականագիտական հանգամանալից քննություն և այս վեպին տալ պատշաճ մասնագիտական ծավալուն գնահատական, որի անհրաժեշտությունն իրոք կա:

Արդ, ի՞նչ է պատկերում Ֆ. Սարյանի «Երբ աստղերն են վայր ընկնում» վեպը և ինչպե՞ս, իրապատում – վավերական լինելով, գեղարվեստական ի՞նչ արժանիքներ ունի այն: Այս հարցադրումների պատասխանը ընթերցողն ինքը պիտի գտնի, քանի որ սահմանափակ տարածքում ու սուղ միջոցներով հնարավոր չէ ամբողջական պատկերացում տալ մի ամբողջ նախորդ դարի վերջին տասնամյակներում Արցախի ազատագրության համար մղված պատերազմական գործողությունների, դրանց նկատմամբ հայ երիտասարդության վերաբերմունքի, հայրենիքի արժևորման նրա բացառիկ գիտակցության ու թշնամու պղծումներից երկիրը փրկելու համար զոհաբերության պատրաստակամությամբ անօրինակ սխրանքներ գործած սերնդի մասին:

Ֆ. Սարյանը, երբևէ Արցախում չլինելով, գրողի իր պարտականությանը՝ ճակատագրական դեպքերը հոգեբանական խորք ունեցող կերպարների շնորհիվ համոզչորեն գեղարվեստականացնելու գործընթացին մոտեցել է գերագույն պատասխանատվությամբ:

Պատերազմ, ռազմական գործողություններ, ռումբերի պայթյուն, թնդանոթների որոտ, հրացանների ճարճատյուն, քայքայվող դիակներ, մահամերձների հռնդյուններ, գնդակների տեղատարափի տակ շարժական հիվանդանոցներում իրարահաջորդ վիրահատություններ նկարագրելը, այն էլ օրագրի տեսքով, օրն ու ժամը նշելով՝ թերևս մեծ դժվարություն չէ: Սակայն Անայիսի, Վահեի, Ավոյի, Նարեկի, Կարենի և մյուս երիտասարդ մտավորականների մարդկային բնավորությունն ու մանավանդ կնոջ հոգեբանությունը, հաղթանակի բերկրանքը վիպական հարուստ գործողությունների մեջ ցուցադրելով կերպավորելը, լիարյուն գրական կերպարներ ստեղծելը իրոք բարձր արվեստի ցուցանիշ են:

Ադրբեջանը հնարավոր ամեն ինչ անում էր, որ դրսից Արցախ մուտք չգործեին Հայաստանից և սփյուռքից եկած կամավորները, Արցախի հերոսական պաշտպանների ձեռքը չընկներ ոչ մի զենք ու զինամթերք: Բայց վեպի հերոսները հնարամտությամբ գտնում են Արցախ թափանցելու և անհրաժեշտ պարագաներն այնտեղ տանելու կերպը:

Պատահական չեն Պ. Սևակի երկերից վեպի հերոսների շուրթերով հնչող մեջբերումները: Դրանց շնորհիվ են նաև այն հաճելի ձգողականությունն ու լարվածությունը, որ վիպական պատումը դարձնում են ճշմարիտ ու գեղարվեստորեն հավաստի:

Շնորհավորում ենք Ֆլորա Սարգսյանի «Երբ աստղերն են վայր ընկնում» վեպի լույսաշխարհ գալը՝ հեղինակին մաղթելով նորանոր ձեռքբերումներ, իսկ ընթերցողին՝ գեղագիտական վայելքի պահեր:

ԽՄԲ.

ՍՏԱՑՎԱԾ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

01.01. 2018 – 06.05. 2018

Հ/հ	Ամսաթիվ	Ազգանուն, անուն	Նպատակը	ՀՀ դրամ
1	08/01/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH 501 W GLENOAKS BLVD, .104 GLENDALE CA 91202-2896	RFB/220424530//DONATION FOR STUDEN T TUITION POP OTHER/DONATION	2420500

			$ 5000	
2	12/01/2018	RAFIK BOROIAN	KASHATAGHI BAZMAZAVAK PROJECT RAFIK 60, $980	474 623
3	15/01/2018	ԱԼՖԱ ՖՈՒԴ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ	Օգնություն	350 000
4	19/01/2018	Բ.Գ.ԱՆՈՆԻՄ	Օգնություն	5 000
5	19/01/2018	ՄԵԼԻՔՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ	Օգն. ծառ. ծրագիր ընկերոջս՝ սիրելի Աշոտ Եղիազարյանի հիշատակին 20.01.2018 թ	20 000
6	23/01/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH 501 W GLENOAKS BLVD, .104GLENDALE CA 91202-2896	/RFB/TO180129B0904100//GURGEN MELIKIAN KHASHATAGH MULTI CHILDREN FAMILY FOUNDATION CHARITY. 5 000 USD	2 408 200
7	30/01/2018	MR SERGE ARZOUMANIAN 134 BERWICK CRES RICHMOND HILL, ON, CA	/RFB/TO180129B0904100//GURGEN MELIKIAN KHASHATAGH MULTI CHILDREN FAMILY FOUNDATION CHARITY, 1440 USD	692 136
8	30/01/2018	ՖՈՔԸՍ ՕՆ ՉԻԼԴՐԵՆ ՆԱՈՒ, ԻՆԿ ԲԿ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃ.	Շուշիի մանկապարտեզի գույք	720 000
9	02/02/2018	Նազարեթ Աքյուզ	Օգնություն – 50 EUR	30 300
10	02/02/2018	Լևոն Մարաշլյան	Օգնություն ԽԵԱ ծրագիր՝ - 600USD	290 100
11	14/02/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH501 W GLENOAKS BLVD, .104GLENDALE CA 91202-2896	/RFB/223711326//ARPEN CENTER CHILD RENS POP OTHER /DONATION, 5 000 USD	2411900
12	14/02/2018	Մարաշլյան Լևոն	Օգնություն ծառերի ծրագիր	50 000
13	16/02/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH501 W GLENOAKS BLVD, .104GLENDALE CA 91202-2896	/RFB/223899842//STUDENT TUITION PROG-RAM POP OTHER /DONATION, 5 000 USD	2 406 500
14	16/02/2018	Հովհաննիսյան Վոլոդյա	Օգնություն	122 500
15	22/02/2018	Toni Kahve	Օգնություն - 1000 USD	482 500
16	01/03/2018	RAFIK BOROIAN HUGES VAG 17 75440 UPPSALA	ROUBIK, FROM ISKHANADZOR THANK YOU G. MELIKYAN FOUNDATION, 980 USD	471 193
17	07/09/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH501 W GLENOAKS BLVD, .104GLENDALE CA 91202-2896	/RFB/225579178//DONATION FOR TREE PR-OJECT POP OTHER/DONATION, 5 000 USD	2 403 200
18	28/09/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH501 W GLENOAKS BLVD, .104GLENDALE CA 91202-2897	/RFB/227241166//DONATION TO COW PRO-GRAM POP OTHER /DONATION. 5 000 USD	2 401 350
19	29/03/2018	ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ	ՀՈՒՇԱՔԱՐԻ ՏԵՂԱԴՐՄ ՖԻՆ ԱՋԱԿՑՈՒԹ	400 000
20	23/04/2018	1/COWANSVILLE HOLDINGS LIMITED1/ROAD TOWN, TORTOLA6/CH/UBS/0206-00161878	/RFB/ZD81113TI9881811//CHARITY, 19980 USD	9593996
21	02/05/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH501 W GLENOAKS BLVD, .104GLENDALE CA 91202-2896	/RFB/229949508//DONATION COW PROJECT MULTICHILDR POP OTHER/DONATION> 5 000 USD	2 416 600
22	07/05/2018	Kyureghyan Varuj & Emma	Օգնություն- 2000 USD	977 000
23	07/05/2018	Ava Yousef Zamani	Օգնություն - 700 USD	341 950
24	07/05/2018	Մարաշլյան Լևոն	Օգնություն - 500 USD	244 250
25	07/05/2018	Գալստյան Սարգիս	Օգնություն	80 000
26	07/05/2018	Հենրիկ Շահնազարյան	Օգնություն	100 000
27	10/05/2018	Իսախանյան Արթուր	Չվերադարձրած հորթի գումար	50 000
28	17/05/2018	GURGEN MELIKYAN MULTICHILDREN FAMLY FOUNDATION OF KASHATAGH 501 W GLENOAKS BLVD, .104GLENDALE CA 91202-2896	/RFB/231595410//DONATION TREE PRO-JECT WATER PROJECTPOP OTHER/DONA-TION TREE WATER PROJECT, 5 000 USD	2 419 150
29	22/05/2018	Մարաշլյան Գևորգ	Օգնություն - 200 USD	96 300
30	25/05/2018	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Սոնա Մովսիսյանի հիշատակին՝ ի փոխան	20 000

			ծաղկեպսակի /19.05.2018թ./	
31	25/05/2018	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ մեր սիրելի Գոհար Ղուկասյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /11.06.2018թ./	20 000
32	25/05/2018	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ Խաչատրյան-ների մայրիկի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /20.05. 2018/	20 000
33	25/05/2018	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Ջորջ Թումանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /11.11.2013թ./	20 000
34	25/05/2018	Մելիքյան Գուրգեն	Օգնություն ծառերի ծրագիր՝ սիրելի Յաշա Թումանյանի հիշատակին՝ ի փոխան ծաղկեպսակի /հոկտեմբեր 2007թ./	20 000
35	25/05/2018	Vardanian Souren	Օգնություն – 1 000 USD	485 000
36	04/06/2018	«Ա.Ս.Պ. ԴԵԼ ՄԱՐ» ՍՊԸ	Բարեգործություն	120 000

Ընդամենը՝ 35 584 248

ԽԵԱ «ԿՈՎ» ԾՐԱԳԻՐ

Սկիզբը՝ նախորդ համարներում:

Հ/հ	Ազգանուն, անուն	Բնակավայր	Երեխ,	Կով	Ականջի N	Բարերարները
371	Միրումյան Աննա Հարությունյան Լյովա	Աղավնո	6	II	5784	Աբուլյան Կարինե Մարգարյան Սարո
372	Բաղիշյան Օնիկ Բաղդասարյան Լորա	Մարտունի	3 (բացառ.)	I	5791	Արա-Տեր Հարությունյան (Կանադա)
373	Ստեփանյան Վարդան Ստեփանյան Արմինե	Իշխանաձոր	6	I	5754	Հայթայան Լևոն - Շանթ
374	Համբարյան Մարիամ Կկրտչյան Էդգար	Գողթանիկ	6	II	5711	VICTOR GREGORI MEDEA and ALEX KALOGNOMOS
375	Բաբայան Ոսկի Բաբայան Սեյրան	Հոչանց	6	II	57378	Քիրեջյան Լևոն
376	Ազախանովա Մարիամ (այրի)	Միջնավան	7	III	5783	Մարտիրոսյան Թիմի և Սեդիկ
377	Ամիրխանյան Վեներա Հայրապետյան Վալերիկ	Գողթանիկ	8	III	5758	Թումանյան Ներսես և Նունե
378	Վասիլյան Ազնիվ Վասիլյան Սամվել	Մուշ	6	II	0090	Սիմոնյան Հրանտ, Արմեն և Ռաֆֆի
379	Հովհաննիսյան Հերմինե Թադևոսյան Հարություն	Գանձա	7	II	5712	Զաքյաններ Ռաֆիկ և Աստղիկ (Սթար)
380	Գրիգորյան Թելիկ Օսեյան Խալտուր	Գանձա	6	II	5710	Նիք և Մերի Քանյաններ (ԱՄՆ)
381	Խաչատրյան Լիլիթ (այրի)	գ. Ղազարապատ	6	II	5768	Գաբրիել Վանեցյան (Շվեյցարիա)
382	Աղաջանյան Սեյրան Ստեփանյան Արտուշ	գ. Ղազարապատ	6	II	5717	Գևորգ Վանեցյան (Շվեյցարիա)
383	Օսեյան Խալտուր Գրիգորյան Թելիկ	Գանձա	7	III	5923	Աննա Վանեցյան (Շվեյցարիա)
384	Համբարյան Մարիամ Մկրտչյան Էդգար	գ. Շիրակ	6	II	5711	Մարիամ Վանեցյան (Շվեյցարիա)

385	Մարգարյան Անի Եղիազարյան Արմեն	գ. Գողթանիկ	5	I	5721	Աշոտ Վանեցյան (Շվեյցարիա)
386	Աբրահամյան Լուսինե Աբրահամյան Արամ	գ. Գողթանիկ	8	III	5799	Ստեփան Վանեցյան (Շվեյցարիա)
387	Հովհաննիսյան Հերմին. Թադևոսյան Հարություն	գ. Գանձա	7	II	5712	Գրիգոր Վանեցյան (Շվեյցարիա)
388	Մուրադյան Սարգիս Անտոնյան Կարինե	ք. Բերձոր	5	II	5746	Վահիկ և Ալվարդ Բանդարի
389	Ալոյան Վարդուհի	Արտաշավի	5	I	5720	Ava Yousef Zamani
390	Դալլաքյան Զոյա Մակինյան Նվեր	Գ. Քարեգահ	6	II	5705	Լևոն Մարաշլյան (ԱՄՆ)
391	Սարգսյան Մարինե Ասատրյան Սուրեն	գ. Վարդուտ	3 /բացառ./	I	5751	Ալենուշ և Ալեք Բաղդասարյաններ (ԱՄՆ)
392	Խոսրովյան Հեղնար Մկրտչյան Բագրատ	գ. Վարդուտ	5	I		Կարինե Աբուլյան Սարո Մարգարյան (ԱՄՆ)
393	Մինասյան Անահիտ (միանակ)	գ.. Դրախտաձոր	3 /բացառ./		5137	Էմմա և Վարուժ Կյուրեղյաններ (ԱՄՆ)

Շարունակելի

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐ, ԴԻՄՈՒՄՆԵՐ

Հիմնադրամի հոգաբարձության խորհուրդը պարբերաբար հիգիենիկ բնույթի օգնություն տրամադրել ինչպես Արցախի Հանրապետության հիվանդանոցներին, դպրոցներին ու մանկապարտեզներին, այնպես էլ ՊԲ զորամասերին: Ն զորամասի զինվորների ու հրամկազմի սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու նպատակով տրամադրվել է երեք նոր ու արդիական ինքնակառավարվող լվացքի մեքենա:

Զորամասի հրամանատարությունից ստացվել է հետևյալ շնորհակալագիրը.

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԲ Ն ԶՈՐԱՄԱՍ

Հարգեկի պրն Գ. Մելիքյան,

ՊԲ Ն զորամասի հրամանատարությունը իր խորին շնորհակալությունն է հայտնում Ձեզ և Ձեր անվամբ գործող՝ «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի ողջ կազմին՝ բարերարության չափանիշներին ու սկզբունքներին նոր որակ հաղորդելու և արցախահայության պաշտպանության երաշխիք բանակի զորամասերի զինվորների ու հրամկազմի սանիտարահիգիենիկ պայմանները բարելավելու համար:

Ձեր կատարած սրբագույն գործերն ապացուցում են, որ բարեգործ լինելը կենսակերպ է, որի մեջ ներդաշնակված են բարոյական բոլոր կարևոր արժեքները: Դրանք մեծ խթան են ու երաշխիք են մեզ վստահված հայրենիքի պաշտպանության սրբազան գործը պատվով կատարելու համար:

ՊԲ Ն ԶՈՐԱՄԱՍԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
(կնիք, ստորագրություն)
Գնդապետ Կ. ՁԱԼԱՎՅԱՆ

«ԵԶՆԻԿ ՄՈՉՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
№ 001 – Ս 01.06.2018
ՍՏԱՑԱԿԱՆ

Սույն ստացականով հավաստում եմ, որ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» «Ավան» ՓԲԸ տնօրեն Ս. Գալստյանի միջոցով, որպես նվիրատվություն, ստացացել եմ 161 /հարյուր վաթսունմեկ/ զույգ սպորտային կոշիկ, որի համար «ԵՄԱՈՒ» հիմնադրամի անունից խորին շնորհակալություն եմ հայտնում:

«ԵՄԱՈՒ» գործադիր տնօրեն՝
(ստորագրություն, կնիք) Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍՏԱՑԱԿԱՆ

«Շուշի ՇԲՄ» ՓԲԸ տնօրինությունը «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացել է 66 (վաթսունվեց) զույգ «Թոմզ» ֆիրմայի արտադրած նոր կոշիկ, որի համար հիմնադրամի հոգա-

բարձության խորհրդին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

«ՇՈՒՇԻԻ ՇԲՄ» ՓԲԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝
(ստորագրություն, կնիք) Վ. Ա, ԽԱՉԱՏՐՅԱՆ

* * *

Հաստատում եմ՝ «Շուշիի Խ. Աբովյանի անվան դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ (ստորագրություն, կնիք)
Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Ինեսա Էդուարդի Պետրոսյանս, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» Սարգիս Գալստյանի միջոցով ստացել եմ 675 (վեց հարյուր յոթանասունհիգ) զույգ կոշիկ աշակերտներին և ուսուցիչներին անվճար բաժանելու նպատակով:

Ստորագրություն՝ Ի. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼՂՀ «Անհայտ կորած ազատամարտիկների հարազատ ներ» հասարակական կազմակերպություն
Մայիս, 2018

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ ԼՂՀ ԱԿԱՀ ՀԿ նախագահ Վերա Արմոյի Գրիգորյանս, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացա 22 (քսաներկու) արկղ օգտագործված հագուստ և 20 (քսան) արկղ նոր կոշիկ՝ 600 (վեց հարյուր) զույգ:

ՍՏԱՑԱ՝ ստորագրություն, կնիք

ՍՏԱՑԱԿԱՆ

ԼՂՀ Զոհված ազատամարտիկների հարազատների միության նախագահ Ա. Առաստամյանս, տալիս եմ սույն ստացականը առ այն, որ 2018 թ. մայիսի 24-ին «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» ստացա 15 (տասնհինգ) արկղ օգտագործված հագուստ և 750 (յոթ հարյուր հիսուն) զույգ նոր կոշիկ:

Ստացականը գրված է իմ ձեռքով, ճիշտ է, որի համար ստորագրում եմ՝

(ստորագրություն) Ա. ԱՌՍՏԱՄՅԱՆ

24. 05. 2018

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

«Գ. Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամից» պրն Սարգիս Գալստյանի միջոցով Շուշիի կենտրոնական գրադարանի համար, ստացանք հետևյալ գրքերը.

1.Վ. Մնացականյան, Ոգու ամրոց, 1 օր.
2.Վ. Մնացականյան, Աննվաճ Հայաստան, 1 օր.
3.Կ. Անանյան, Անհայտ էջեր հերոսի մասին, 2 օր
4.Վ. Մնացականյան, Նժդեհապատում, 1 օր.
5. Ավրելագիտական հարցեր, 1 օր.
6.Ս. Չախալյան, Մոնթեն նայում է Արարատին, 2 օրինակ

Ընդամենը՝ 8 (ութ) օրինակ:

ՍՏԱՑԱՎ՝ (ստորագրություն, կնիք)
Ժ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Շուշիի կենտրոնական գրադարանի տնօրեն

ՀԱՆՁՆԵՑ՝ (ստորագրություն) Ս.ԳԱԼՍՏՅԱՆ

* * *

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն պրն Գ. Մելիքյանին
ԱՀ Քաշաթաղի շրջանի «Իշխանաձորի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Ն. Եղիկյանից

ԴԻՄՈՒՄ

Իշխանաձորի Հովհ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում սովորում է 105 երեխա:

Խնդրում ենք աշակերտներին տրամադրել 105 հարյուր հինգ զույգ կոշիկ:

Կից ներկայացվում են կոշիկների համարները:

ԴԻՄՈՂ՝ (ստորագրություն) Ն. ԵՂԻԿՅԱՆ

Կոշիկները հատկացվել են:

* * *

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՐՑԱԽԻ ՄԻԱՎՈՐ
Շուշիի «Սոսե» մանկապարտեզ

ՍՏԱՑԱԿԱՆ

Ես՝ Շուշիի «Սոսե» մանկապարտեզի տնօրեն Ա. Պ. Մինասյանս, Շուշիի «Ավան պլազա» հյուրանոցի տնօրեն Ս. Գալստյանից ստացել են 51 (հիսունմեկ) զույգ կոշիկ:

Ստացող՝ տնօրեն (ստորագրություն)

19.12.2017 Ա. Պ. ՄԻՆԱՍՅԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Ես՝ սիրիահայ ուսանող Շեյխուկ Շանթս, սովորում եմ ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի 3-րդ կուրսում: Հայաստանում գտնվելուս առաջին իսկ օրերից շրջապատված եմ եղել հոգատարությամբ: Մարդիկ թեև ժամանակավոր նեղություններ հաղթահարելու, երկիր վերականգնելու դժվարությունների մեջ են, բայց երբեք զգալի չեն դարձրել հայրենիքում օտարերկրացի լինելս: Մանավանդ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդը՝ գործադիր տնօրեն պրոֆ. Գ. Մելիքյանի գլխավորությամբ, ամեն տարի ինձ մեծապես օգնել է ուսման վարձը մուծելիս: Երախտագիտությամբ արձանագրում եմ այս ազնիվ արարքը և հայտնում խորին շնորհակալությունս:

Ստորագրություն՝ ՇՈՅԽՈՒԿ ՇԱՆԹ

30.08. 2018

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐ

Ա. Գիտակցելով բարձրակարգ մասնագետներ պատրաստելու և մեր իրականության տարբեր ոլորտներին արժանավոր ուսանողներին խրախուսելու հույժ կարևորությունը՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհուրդը կրկին հայտարարում է մեծ մարդասեր, մեր ժողովրդի պանծալի զավակ, Լոս Անջելեսի հայ գաղութի համայնքային կյանքի կազմապակերպիչներից մեկի՝ «Անահիտ» հիմնադրամի բազմամյա նախագահ, լուսահոգի

ՆԱԶԵԼԻ
ՉԱՐՉՅԱՆԻ

անվան կրթաթոշակ՝ բարձր առաջադիմություն և օրինակելի վարք ցուցաբերած առաջավոր ուսանողների համար:

Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի դեղագիտության և քիմիայի ֆակուլտետի այն ուսանող - ուսանողուհիները, ովքեր ունեն ուսման բարձր առաջադիմություն և օրինակելի վարք:

Մրցույթին մասնակցել ցանկացողները հիմնադրամի հոգաբարձության խորհրդին անհրաժեշտ փաստաթղթերի հետ միասին դիմում կարող են ներկայացնում նրա գործադիր տնօրեն պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանի անունով:

Դիմումները փաստաթղթերի հետ միասին մինչև սեպտեմբերի 20-ը ներկայացնել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանատ կամ հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանին:

Բ. Հոգաբարձության խորհուրդը կրկին մրցույթ է հայտարարում նաև ականավոր գրող, թարգմանիչ և հանրային գործիչ, իր իսկ բնութագրմամբ՝ «չխոնարհվող եղեգ», երջանկահիշատակ

ՍՏԵՓԱՆ
ԱԼԱՋԱՋՅԱՆԻ

անվան կրթաթոշակի համար: Մրցույթին կարող են մասնակցել Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի ուսանողները:

* * *

Ելնելով ստեղծված սոցիալ-տնտեսալկամն ծանր վիճակից՝ Հիմնադրամիս հոգաբարձության խորհուրդը որոշում է՝

միանվագ նյութական օգնություն տրամադրել հայրենական գիտության զարգացման բնագավառում առանձնակի խոշոր ավանդ ներդրած մտավորականների ընտանիքներին, որոնք ունեն դրա կարիքը:

* * *

Շարունակվում է խոշոր եղջերավոր անասունների տրամադրման «Կով» ծրագիրը:

Հոգաբարձության խորհրդի որոշմամբ՝ կովեր տրվում են Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանում բնակվող բազմազավակ ընտանիքներին՝ ըստ երեխաների քանակի, ընդ որում՝

- 4 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է մեկ կով
- 6 երեխա ունեցող ընտանիքներին տրվում է II կովը
- 7 և ավելի երեխա ունեցողներին տրվում է III կովը:

ԳՐԱԿԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Հովհաննես Շիրազը թողել է հազարավոր ձեռագիր բանաստեղծություններ, որոնք հրատարակվելու են «Անտիպ էջեր» խորագրով գրքերով: Դրանք հեղինակի տպագրված երկերի երկվորյակներն են, դարի արատավոր երևույթների հանդեպ նրա ըմբոստության, ազնիվ պոռթկումի հզոր արտահայտությունները, որոնք հասկանալի պատճառներով չեն տպագրվել ժամանակին:

Տպագրվող Ա հատորից մի քանի բանաստեղծություն ներկայացնում ենք «Բարեգործի» ընթերցողին:

ՂԱՐԱԲԱՂԻ ՈՂԲԸ

Ղարաբաղը մորս կանչն է,
Ինձ է կանչում հույսով տրտում,
Ղարաբաղը իմ կակաչն է
Կարմիր, բայց սև ունի սրտում:

Դու էլ, դառած կռվախնձոր, իմ բալիկն ես, ա՛յ Ղարաբաղ,
Մեղրդ օտար մեղվին տվող իմ ծաղիկն ես, ա՛յ Ղարաբաղ,
Հայաստանից քեզ պոկողը Հայաստանի եղբայրը չէ՛,-
Երկուսիս մեջ դու էլ մոլոր իմ բալիկն ես, ա՛յ Ղարաբաղ:

Քանի՛ բաժան դաժան տարի հայոց բերնին ա՛խ ես դառել,
Փոխել հայոց անունդ Արցախ, օտար Ղարաբաղ ես դառել,
Դարձել օտար ջաղացին ջուր, ազգիդ սրտին դաղ ես դառել,-
Էլ չեմ կարող վիշտս լռել, վա՛յ ինձ ու քեզ, հա՛յ Ղարաբաղ:

Դեռ էն գլխից հայոց հող ես, աստվածընծա իմ լեռնաձոր,
Քո դրախտից ձեռ քաշող հայն հայոց վայն է, իմ մեղրածոր,
Թե եղբայր են՝ ինչո՞ւ են քեզ մեր մեջ դարձրել կռվախնձոր,-
Աստվածընծան ինչպե՛ս թողնես սատանային փայ, Ղարաբա՛ղ:

Կթառամես անտիրական՝ այգեպանիդ ձեռքից զատված,
Շիքյաստի ես խաբված լսում՝ Կոմիտասիդ երգից զատված,
Քեզ չեն թողնի իշխան մնաս՝ մայր Սևանի գրկից զատված,-
Քեզ կուլ կտան մուղամները, զառդ կանեն զայ, Ղարաբա՛ղ:

Դու չես ջոկվել, քեզ խլել են, որ մոռանաս երգերն հայոց,
Զորերիդ պես խորացել են անդնդախոր վերքերն հայոց,
Ա՛խ, ե՞րբ պիտի լեռներիդ պես վե՛ր բռունցքվեն ձեռքերն հայոց,
Որ չթողնեն Հայոց արծիվն օտար ծովին ճայ, Ղարաբա՛ղ:

Բա՛ց աչքերդ, անդո՛ւնդը տես, ե՛կ, մի՛ ձուլվիր օտար զարմին,
Իմ տարագի՛ր հայոց կռունկ, ե՛կ խառնվիր քո երամին,
Մեզ չի կարող մահն էլ զատել. մի հոգի ենք ու մի մարմին,-
Դու իմ Կարսի, իմ Սասունի, իմ Մասիսի թայ, Ղարաբա՛ղ:

Մենակ դո՛ւ չես, որ դիմանամ, յոթը դրախտ ունեմ խլված,
Վանա ծովը, Կարսն ու Վանը, Սիփան սարը, Անի՛ն փլված,
Հայկ Նահապետ Մասիսի պես դեռ բանտում են՝ ծունկ ծալված,-
Տարտարո՛ս է Տարոնը դեռ, ո՛ւր ես, Ավարա՛յր Ղարաբաղ:

Ասում են, թե շեն է կյանքդ, առանց ազգի շենն ի՞նչ անեմ,
Երբ չի զնգում հայոց լեզվով, գինով թասի ձենն ի՞նչ անեմ,
Հյուսիսն ինքն էլ սառցալուռ է, էլ իմ անզոր քենն ի՞նչ անեմ,-
Գինիդ օտար թասն է խմում, արցունքդ հայն, ա՛յ Ղարաբաղ:

Բարեկամը որ քեզ խլեց, էլ թշնամին բան կտա՞ ետ,
Թե լուռ մնա քար աշխարհը՝ չարը Կարս ու Վան կտա՞ ետ,
Ի՞նչ դուռ բախեմ, որ ծիծաղեմ, ասեմ՝ Նախճվան կտա՛ ետ,
Մոլորվել եմ ե՛ս էլ քեզ պես, պի՛ղծ է աշխարհն, ա՛յ Ղարաբաղ:

Քանի իմ հողն ինձ չեք տվել՝ ձեզ ելուզակ պիտի ասեմ,
Ավարայրի Վարդան դառած՝ ես ձեզ վասակ պիտի ասեմ,
Երբ իմ բոլոր հողերն ինձ տաք՝ ձեզ հրեշտակ պիտի ասեմ,-
Պիտի պաշտեմ ողջ ազգերիդ, երբ որ չասեմ՝ վա՛յ Ղարաբաղ:

Դո՛ւ էլ հայոց գրկից խլված իմ բալիկն ես, ի՛մ հեռավոր,
Պոռնկաշուրթ բախտի ձեռքին խաղալիք ես, ի՛մ լեռնաձոր,
Բայց ինչքան էլ բալիկիս պես մեր մեջ մնաս կռվախնձոր՝
Շիրազն ասաց՝ աշխարհն անցնի՝ հայ գալիք ես,հա՛յ Ղարաբաղ:

1959 թ.

ԱՐՑԱԽՈՒՀՈՒՆ

Ելեք տեսե՛ք՝ իմ Արցախից ի՞նչ հրաշքի հավք է գալիս,
Լեզվով՝ հայոց իղձերի զանգ, մարմնով մաքուր վանք է գալիս,
Երևանի լուսին կանայք, թաքնվեցե՛ք ամպի քողով,
Արևի կեսն առած դեմքին՝ սիրո ոսկի հանք է գալիս:

Քնած սիրտս հազար աչքով վեր է թռչում իր ճամփեքին,
Թևեր չունեմ, ո՞նց փախցնեմ, հրեշտակ է սա, էլ ի՞նչ կին,-
Ես այն մորը ո՞նց մոռանամ, որ ծնել է այս եղնիկին.
Մորը ինչպե՞ս դրսում թողնեմ՝ ձագն ինձ հույսի զանգ է գալիս:

Ասես բոլոր եղնիկներն են մի կույս դառել՝ մտել քաղաք,
Նուշ աչքերը նմուշ են՝ ծով իմ Արցախի մեղրաշողակ.
-Ա՛խ, նմուշից ո՞նց կշտանամ՝ մի շիթ ձագն է՝ ծով մոր տեղակ,
Ես այս հուրու մորը կուզեմ, ձագով լոկ մի կյանք է գալիս:

Ալ շրթունքներն ի՞նչ շաքար են՝ աչքով գրկողն ի՞նչ կիմանա,
Թեկուզ հազար աչքով ուզեմ՝ դատարկ գիրկս ո՞նց դիմանա,
- Ավա՛ղ,- ասին,- սիրած ունի՝ ինձ վառելով պիտի գնա ,-
Մենակ ես չեմ… ողջ քաղաքը խելքից հանող բանգ է գալիս:

Քնի մեջ էլ փրփրում է սրտիս բերանն՝ ախ ու վախից,
Ա՛խ, այս վարդի մայրն է տենչս, ո՞նց ձեռ քաշեմ իմ Արցախից,
Օտարը որ ձեռ չի քաշում՝ ես ո՞նց քաշվեմ Հայոց թաղից. –
Ղարաբաղված իմ Արցախից ահազանգի զանգ է գալիս:

Ելեք տեսե՛ք՝ ի՞նչ կարոտ է մայրաքաղաքն ալեկոծում,-
Ա՞խ, ինչո՞ւ չես զույգ հոնքերիդ գոնե մեկով կամուրջ զցում,,
Որ ողջ Արցախն հետդ բերես, որ ծովանա հայոց ածուն,
Բե՛ր, որ չըլամ, թե ատրուշանն ինչո՞ւ հայոց վանք է գալիս:

* * *

Ես երկաթե վարագույրի ետև եմ դեռ,
Իբր, ավա՛ղ, թեթև եմ դեռ,
Ես պողպատե վարագույրի ետև եմ դեռ,
Իբր անարծիվ՝ անթև եմ դեռ:
Ես մահաբեր վարագույրի ետև եմ դեռ,
Իբր անբարի ու սև եմ դեռ,
Ինչ էլ հաչեն՝ ես՝ հայ ոգին, ես՝ հար անմեռ,
Աստղերի մեջ արև եմ դեռ:

* * *

Բա՛վ է խաբվեք օտար հացով,
Բա՛վ է թափվեք դուք ծովեծով,
Պանդուխտ իմ աղբյուրնե՛ր,

Ձեզ կձուլեն ծովերն օտար,
Ձեզ կձուլեն ծովերը չար՝
Կչքանաք անտեր:

Կանգ է առել մեր վշտահար
Մասիսն, ինչպես ջաղացաքար,
Վերադարձե՛ք, ջրե՛ր,

Որ նոր աղունն հայոց հացի
Մասիս ու լեռ Արագածի
Երկու քարով աղանք,

Ելենք Մասիս ու գագաթին
Ցրենք հայոց վիշտը մթին,
Արև - դրոշ շողանք:

* * *

Մենք Մասիսին բերդ ունեինք, երբ տուն չուներ թշնամին,
Դեռ չգիտեր՝ Բոսֆորն ուր է, գայլ-թռչուն էր թշնամին,
Հիմա շան պես ելել Մասիս՝ վար է հաչում մեզ վրա,-
Ո՛վ մարդկություն, լռությո՛ւնդ է Աստծու և մեր թշնամին:

* * *

Սի՛րտ իմ, մի՞թե դեռ չգիտես՝ ո՛վ է կտրում մեր ճամփան,
Իբր այրող անապատում հովն է փնտրում մեր ճամփան,-
Ավա՛ղ, ի՛նչ հով, սամո՛ւմ ասա՝ հով համբույրում ծպտված,
Հայո՛ց գետեր, ո՞նց խաբվեցիք, ծո՛վն է կտրում ձեր ճամփան:

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ՝

ԱՎԱԳՅԱՆ Ա., բ. գ. դ., պրոֆեսոր

ՄԵԼԻՔՅԱՆ Գ., բ. գ. թ., պրոֆեսոր

ՍԱՖԱՐՅԱՆ Ա., պ. գ. թ., պրոֆեսոր

Համարի նյութերը, շարվածքը և ձևավորումը՝

Ս. Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99: Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝

Երևան 0025, Աբովյան 52 Ա, ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 215 սենյակ:

Հեռ.՝ 060 710 629, 055 -52- 29-36, 55 – 25 - 37, 52- 29- 36: